ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033,ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

№ Ե/39/752-25 «24» 10 2025թ.

«ՄԱՔՍ ՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
/հասցե՝ Երևան, Երևան-էջմիածին խճ 12, Պտղունք;
էլ. հասցե՝ maxshin2021@mail.ru/

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Տեղեկացնում ենք, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի ապրիլի 14-ին կնքված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում հատկացվել են ֆինանսական միջոցներ և սույն թվականի մայիսի 29-ին կնքվել է համաձայնագիր, սակայն Ձեր կողմից սահմանված ժամկետում մինչև սույն թվականի հունիսի 18-ը ներառյալ 12-13-րդ չափաբաժինների մասով մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 2025 թվականի հոկտեմբերի 24-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիր կնքելիս Ձեր կողմից սահմանված կարգով ներկայացվել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծման արդյունքում՝ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/28 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պետք է ապահովվի որակավորման ապահովման մասով՝ 23,100.00 (քսաներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամի չափով, պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 15,400.00 (տասնհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 1570083324940100 հաշվեհամարին:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին:

Խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն այդ հանգամանքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է

լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատարող՝ Վ. Էլոյան

Հեռ. +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)